Հուշագիր
Memorandum

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի Մարզի Ջերմուկ Քաղաք և Չեխիայի Հանրապետության Կարլովվարյան Երկրամասի Կարլովի Վարի Քաղաքի Միջև Համագործակցության Մասին

O spolupráci mezi městem Džermuk (Vajoc dzorská oblast, Arménská republika) a městem Karlovy Vary (Karlovarský kraj, Česká republika)

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքը՝ ի դեմս քաղաքապետ Վարդան Հովհաննիսյանի և Չեխիայի Հանրապետության Կարլովվարյան երկրամասի Կարլովի Վարի քաղաքը՝ ի դեմս քաղաքապետ Պետր Կուլհանեկի, ելնելով Հայաստանի Հանրապետության և Չեխիայի Հանրապետության միջև հաստատված բարեկամական հարաբերություններից, ձգտելով ստեղծել և զարգացնել փոխշահավետ համագործակցություն՝ հիմնված փոխադարձ հարգանքի, վստահության և իրավահավասարության վրա, ընդունելով տարբեր բնագավառի փոխհարաբերություններում բարեկամական կապերի պահպանման կարևորությունը, համաձայնվեցին ներքոհիշյալի շուրջ.

Հոդված 1. Հուշագրի պայմանները

1.1 Կողմերը համագործակցություն են իրականացնում Հայաստանի Հանրապետության և Չեխիայի Հանրապետության օրենսդրության համապատասխան:

1.2 Կողմերը ժամանակին տեղեկացնում են միմյանց այն որոշումների մասին, որոնց ընդունումը շոշափում է մյուս կողմի շահերը, ինչպես նաև ձեռնպահ են մնում այնպիսի գործողություններից, որոնք կարող են մյուս կողմին պատճառել տնտեսական կամ այլ վնաս:

Հոդված 2. Հուշագրի առարկան

2.1 Կողմերը տեղեկություն են փոխանակում իրենց գործունեության և սոցիալ-տնտեսական զարգացման ձեռք բերված արդյունքների մասին:

2.2 Կողմերը փոխադարձ կապերի ստեղծման և զարգացման նպատակով իրականացնելու են պաշտոնական պատգամավորությունների և տնտեսական գործունեության տարբեր բնագավառների մասնագետների, տուրիզմի զարգացման բնագավառում, տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքի փորձի փոխանակում:

2.3 Կողմերը գտնում են, որ համագործակցության իրականացմանը կարող են մասնակցել ձեռնարկություններն ու կազմակերպությունները՝ անկախ սեփականության ձևից և գերատեսչական ենթակայությունից:

2.4 Կողմերը, ելնելով առևտրա-տնտեսական համագործակցության արդյունավետության բարձրացման շահերից, իրականացնում են կողմերի տարածքներում արտադրվող հիմնական ծառայությունների և արտահանվող ապրանքների ցանկի փոխանակում:

2.5 Ցուցահանդեսա-տոնավաճառային գործունեության համաձայնեցման նպատակով՝ Կողմերը նախօրոք փոխանակվում են կազմակերպությունների, միջազգային ցուցահանդեսների և տոնավաճառների, ինչպես նաև արտաքին տնտեսական և ներդրումային համաժողովների, սեմինարների, խորհրդաժողովների և այլ միջոցառումների անցկացման ծրագրերով:

2.6 Կողմերն աջակցում են մշակույթի, առողջապահության, կրթության, սպորտի և տուրիզմի հաստատությունների, հասարակական կազմակերպությունների միջև անմիջական կապերի հաստատմանը:

2.7 Կողմերն իրականացնում են համագործակցություն գովազդի բնագավառում համապատասխան պայմանավորվածությունների ձեռք բերման դեպքում:

2.8 Կողմերն իրավասու են իրականացնել համագործակցություն այլ բնագավառներում, որոնք սույն Հուշագրում նշված չեն:

Հոդված 3. Հուշագրի գործողության ժամկետը

3. Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և գործում է 5 տարի ժամկետով: Հուշագիրը հետագայում երկարաձգվում է յուրաքանչյուր հաջորդ տարվա համար, եթե Կողմերից ոչ մեկը նախօրոք, բայց ոչ ուշ քան նրա գործողության ժամկետի լրանալուց 2 ամիս առաջ, մյուս կողմին գրավոր ձևով չի հայտնի սույն Հուշագրի լուծարման իր մտադրության մասին:

3.2 Հուշագիրը կարող է լուծարվել իր գործողության ժամանակաշրջանում Կողմերի փոխադարձ պայմանավորվածությամբ, որն արտահայտված է գրավոր ձևով:

Հուշագիրը կհամարվի լուծարված նրա դադարեցման մասին Կողմերից մեկի գրավոր ծանուցումից 2 ամիս հետո:

Հոդված 4. Հուշագրի փոփոխման պայմանները

Սույն Հուշագիրը կարող է լրացվել կամ փոփոխվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Սույն Հուշագրի բոլոր փոփոխություններն ու լրացումները իսկական են, եթե նրանք կատարվել են գրավոր ձևով և ստորագրված են լիազոր ներկայացուցիչների կողմից:

* * *

Město Džermuk (Vajoc dzorská oblast, Arménská republika), zastoupené primátorem města Vardanem Edisonovičem Ogannisjanem, a město Karlovy Vary (Karlovarský kraj, Česká republika), zastoupené primátorem města Petrem Kulhánkem, vycházejíc z přátelských vztahů mezi Arménskou republikou a Českou

republikou, usilujíc o vytvoření a rozvoj vzájemně výhodné spolupráce na principech vzájemné úcty, důvěry a rovnoprávnosti, uznávajíc důležitost podporování přátelských vztahů v různých sférách vzájemných vztahů, se dohodly o následujícím:

Článek 1. Podmínky memoranda.

1.1 Účastníci budou spolupracovat v souladu s legislativou Arménské republiky a legislativou České republiky.

1.2 Účastníci se budou včas vzájemně informovat o rozhodnutích, jejichž přijetí se týká zájmů druhého Účastníka, a rovněž se zdrží úkonů, které mohou druhou stranu ekonomicky či jinak poškodit.

Článek 2. Předmět memoranda.

2.1 Účastníci si vymění informace o své činnosti a dosažených výsledcích sociálně-ekonomického rozvoje.

2.2 Účastníci si za účelem navázání a rozvoje vztahů mezi regiony vymění oficiální delegace a specialisty různých odvětví hospodářské činnosti, zkušenosti v oblasti rozvoje cestovního ruchu a zkušenosti s prací místních řídících orgánů.

2.3 Účastníci počítají s tím, že se spolupráce mohou zúčastnit podniky a organizace nezávisle na formách vlastnictví a podřízenosti úřadům.

2.4 Účastníci si v zájmu zvyšování efektivity obchodně-ekonomické spolupráce vymění přehledy základních druhů služeb a exportních výrobků, které se vyrábějí na územích států.

2.5 S cílem koordinovat výstavní a veletržní činnost si Účastníci včas vymění plány organizace a provedení meziregionálních a mezinárodních výstav a veletrhů, jakož i zahraničně ekonomických a investičních fór, seminářů, konferencí a jiných akcí.

2.6 Účastníci podpoří navázání přímých vztahů mezi kulturními, zdravotnickými, vzdělávacími, sportovními a turistickými zařízeními, jakož i společenskými organizacemi.

2.7 Účastníci budou spolupracovat ve sféře reklamy při dosažení odpovídajících dohod.

2.8 Účastníci jsou oprávněni spolupracovat v jiných sférách, neuvedených v tomto memorandu.

Článek 3. Doba platnosti memoranda.

3.1 Toto memorandum vstupuje v platnost dnem jeho podpisu a je platné po dobu 5 let. Dále se memorandum prodlužuje o každý následující rok za podmínky, že ani jedna ze stran včas, avšak nejpozději 2 měsíce před uplynutím lhůty jeho platnosti neoznámí písemně straně druhé o svém záměru vypovědět toto memorandum.

3.2 Memorandum lze vypovědět v době jeho platnosti po vzájemné dohodě stran, vyjádřené písemnou formou. Memorandum bude považováno za vypovězené po uplynutí 2 měsíců od písemného oznámení jedné ze stran o jeho zrušení.

Článek 4. Podmínky změny memoranda.

Toto memorandum lze doplnit či změnit na základě vzájemného souhlasu stran. Veškeré změny a dodatky tohoto memoranda jsou platné, pokud jsou učiněny písemně a podepsány zplnomocněnými zástupci obou stran.